

Գէորգի (Մհա.) ԱԼԼԱՀՎԵՐՏԵԱՆ.—Որդի Ալլահվերտեան ատէր Յակոբ ք.ի, 1816ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը, համաձայն յիշատակարանի մը. «յիշատակ է քարոզգիրքս ալահվէրտու որդու ար. Ակոբին իւր որդի Գէորգին ով որ կարդայ թող մէկ բերան ողորմի տայ ամէն»:

Ի վարելու մն ար. յակոբի որդի մհա. Գէորգին երթալն երէմ. (Երուսաղէմ) քաղաքն ՌՄԿԵԻՆ» (=1816): (ՅԱ. Թ. 17 էջ 59):

Գէորգի ԿՈՅՐ Ի ԾՆԷ, ԱՐՃԻՇԵՑԻ.—Ըստ Յայամաւուրաց, կոչուած է Այլիլայ, կոյր ըլլալուն համար. չափահասութեան տարիքին նուիրուած է ճիշտողական կեանքի, յետոյ Գրիգոր անուն կրօնաւորի մը հետ, իբրև ուխտաւոր հօթն անկամ Ս. Յակոբի վանքը կ'այցելէ և կը ճամբորդէ Հռովմ. բայց Հունգարիոյ մօտերը աւազակներէ կը կողոպտուին, կը ծեծուին ու կը մնան անպասապար: Մերձակայ վանքի կրօնաւոր մը հանդիպելով տառնց՝ վանք կը բերէ, բայց Գրիգոր կը վախճանի, թէև Գէորգին ցու չպատճառելու համար լուր չեն տար, բայց Գէորգ կ'ըզայ ընկերոջ մահը, և կը խնդրէ որ զինքը եկեղեցի տանին. Գէորգ կ'աղօթէ և Գրիգոր կենդանութիւն կ'առնու և մարմինը կը շարժի: Այս դէպքէն վերջ Հռովմ կ'երթան և յետոյ կը դառնան Անի. Գէորգ կը մեռնի հոն 1167 ին: Վարդան Բարձրբերդցի եւս կը յիշէ (Պատմ. էջ 129) Գէորգի Հռովմ այցելութիւնը և վերողբեալ դէպքը:

Գէորգի ԹԻՖԼԻՉՅԻ.—Բրձ. Բեթղեհէմի Ս. Ծննդեան եկեղեցիին մէջ 40 տարի լս.ի պաշտօն կը կատարէ, կը վախճանի 1876ին:

Գէորգի (մհա.) ԹՈՓԱԼԵԱՆ, ԳԱՐՀԻՍԱՐՅԻ.—1890ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը, «Մշանջնաւոր Յիշատակարան»ի մը համաձայն, Ս. Յակոբի վանքին կտակարարներէն մին եղած է:

Գէորգի (Մհա.) ԿԵՍԱՐԱՅԻ.—1740ին Ս. Յակոբի Մտտենադարանին յիշատակ կը դնէ աւետարան մը, որուն յիշատակարանէն կը քաղենք (ՄՁ. Թ. 114) «... արդ եղաւ յիշատակ սբ. աւետարանս Քսի. վերոյգրեալ բարեպաշտօն և երկիւղած հոգւոյ մի. Գէորգին և հանգուցեալ ծնողացն նորին Կեսարոցի բարեպաշտօն իշխան մահտեսի Սարգիս Այլիֆային և մհի. Նազլուին և համեստուհի կողակցոյն Հուրին և հանգուցեալ զաւակացն